



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

« 10 » 2018թ

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 90

**Ձեռնարկողը՝**

**<<Շանթ-Սերյան>> ՍՊԸ**

**Գործունեությունը՝**

**Քարածիհի անդեզիտաբազալիտի երևակումում  
2018-2020թթ. կատարվելիք երկրաբանահետախուզական  
աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության  
նախնական գնահատման հայտ  
Գեղարքունիքի մարզ**

**<<Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն>> ՊՈԱԿ-ի  
տնօրենի ժ/պ՝**



Ռ. Ոսկանյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԲՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԲՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 90

«17» 10 2018թ.

**Գեղարքունիքի մարզի Քարածիի անդեզիտաբազալտի երևակումում 2018-2020 թթ. կատարվելիք երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

Ձեռնարկող՝ <<Շանթ-Սեյրան >> ՍՊԸ  
Ներկայացված նյութեր՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ և կից փաստաթղթեր /Գ կատեգորիա/  
Տեղադրման վայրը՝ Գեղարքունիքի մարզ, Վերին Գետաշեն համայնք

Գեղարքունիքի մարզի Քարածիի անդեզիտաբազալտների երևակումում երկրաբանահետախուզական աշխատանքները կատարվելու են «ՇԱՆԹ-ՍԵՅՐԱՆ» ՍՊԸ-ի նախաձեռնությամբ և իր ֆինանսական միջոցների հաշվին, դրանք որպես շինարարական ավազի և խճի հումք գնահատելու, պաշարների հաշվարկման և հանքավայրի հետագա շահագործման համար:

Գեղարքունիքի մարզի Քարածիի անդեզիտաբազալտների երևակումը գտնվում է Գեղարքունիքի մարզի Վերին Գետաշեն համայնքի վարչական տարածքում, Արմաղան սարի հարավ-արևմտյան փեշին, զբաղեցնում է մոտ 11հա տարածք:

Երկրաբանահետախուզական աշխատանքները կիրականացվեն հորատանցքերի մաքրվածքների և բացահանքի անցմամբ, հաշվի առնելով բնական մերկացումները, կատարելով համապատասխան փաստագրման և նմուշարկման աշխատանքներ:

Հաշվի են առնված տեղամասի երկրաբանական կառուցվածքի բարդությունը, տեղամասի չափերը, ռելիեֆի ձևը, մերկացվածության աստիճանը գեոմորֆոլոգիական և լեռնատեխնիկական պայմանները:

Նախագծով նախատեսվում են երկրաբանահանույթային աշխատանքներ, հորատանցքերի մեխանիկական սյունակային հորատում, նմուշարկում, փորձնական հանույթ ռադիոմետրական և ինժեներա-հիդրոերկրաբանական ուսումնասիրություններ:

<<ՇԱՆԹ-ՍԵՅՐԱՆ>> ՍՊ ընկերությունը << Գեղարքունիքի մարզի Քարածիի անդեզիտաբազալտի երևակումում 2018-2020թթ. կատարվելիք երկրաբանահետախուզական աշխատանքներն իրականացնելու է հետևյալ մեթոդաբանությամբ և ծավալներով՝



- տոպոգրաֆիական և երկրաբանական հանույթ 11հա,
- հորատանցքերի մեխանիկական սյունակային հորատում 5 հորատանցքեր 89 մետր ընդհանուր ծավալով,
- հորատահանուկի փաստագրում 89.0զծ. մ,
- մաքրվածքներ 20.0զծ.մ,
- բնական մերկացումներ 30.0զծ.մ,
- փորձնական բացահանք 30.0զծ.մ.,
- նմուշների ֆիզիկամեխանիկական փորձարկումներ 22 նմուշ,
- քիմիական անալիզներ 2 նմուշ
- հորատահրապարակների կառուցում 100խմ ծավալով,
- ռադիոմետրական հիդրո և ինժեներաերկրաբանական ուսումնասիրություններ:

Առաջացած մակաբացման ապարները՝ 100խմ ծավալով, կուտակվելու են նախատեսվող գործունեության տարածքում՝ գրունտային ճանապարհներների հարթեցման և վերականգնման համար: Մոտեցման ճանապարհների կառուցում չի նախատեսվում:

Հորատման աշխատանքները կիրականացվեն սյունակային հորատման ուղղաձի հորատանցքերի հորատման միջոցով: Հորատումը կկատարվի կարծր համաձուլվածքային թագիկներով՝ 132-112 մմ տրամագծով: Նախատեսվում է հորատել 11-30 մետր խորության 5 հորատանցքեր 83 մետր ընդհանուր ծավալով, հորատահանուկի նվազագույն ելքը՝ 80%:

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են հորատանցքերի հորատահանուկը, մաքրվածքները և բնական մերկացումներն ու բացահանքը:

Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում են կատարվել 1:100 մասշտաբով: Այդ աշխատանքների ծավալները հետևյալն են ըստ տեսակների

- Հորատահանուկի փաստագրում – 90.0զծ. մ
- Մաքրվածքներ - 20.0զծ.մ
- Բնական մերկացումներ - 30.0զծ.

Անդեգիտաբազալտները նախատեսվում է ուսումնասիրել որպես շինարարական խճի և ավազի արտադրման հումք:

Նմուշարկումն իրականացվելու է հորատանցքերի հորատահանուկից, բացահանքից և բնական մերկացումներից:

Հորատահանուկի նմուշների սեկցիայի երկարությունը մինչև 5մ:

Հանուկային նմուշների ընդհանուր քանակը կկազմի 15 նմուշ (74մ). մենաքարերի վերցնում մերկացումներից մեկական, փորձնական բացահանքից 1 կամ 2 հատ: Մենաքարերի ընդհանուր քանակը կկազմի 6 հատ (20x20x20սմ չափսերի).

- Քիմիական և քարաբանական կազմի ուսումնասիրման նպատակով նախատեսվում է վերցնել 2-ական նմուշ:

Նախատեսվում են նաև ռադիոմետրիական ուսումնասիրություններ, օգտակար հանածոյի ռադիացիոն հիզիենիկ հատկությունների ուսումնասիրման նպատակով:

Ֆիզիկամեխանիկական հատկությունները կուսումնասիրվեն 21 նմուշներով (հորատահանուկ 15 նմուշ, մենակաքար 6 նմուշ): Նմուշներից 12-ը կենթարկվեն փորձարկումների լրիվ ծրագրով, իսկ 9-ը կրճատ: Լաբորատոր հետազոտման կենթարկվի մեկ համախառն նմուշ խճի ուսումնասիրման համար:



Լաբորատոր ուսումնասիրությունները և նմուշների ֆիզիկամեխանիկական փորձարկումներ նախատեսվում են կատարել համապատասխան մասնագիտացված լաբորատորիայում:

Նախատեսվում է երևակման սահմաններում փորձնական բացահանքի անցում 300մ<sup>3</sup> ծավալով, որից 100մ<sup>3</sup> դեյուվիալ առաջացումներից ու հողմնահարված՝ ապարներից և 200մ<sup>3</sup> չհողմնահարված, թարմ ապարներից: Նշված մեծածավալ տեխնոլոգիական նմուշը կենթարկվի վերամշակման ջարդիչ-տեսակավորման արտադրամասում, կորոշվի ստացված խճի և ավազի ֆիզիկամեխանիկական հատկությունները և հատիկաչափական կազմը արդյունաբերական պայմաններում:

Այս աշխատանքները կկատարվեն մեխանիկական եղանակով, օգտագործելով բուլդոզեր և էքսկավատոր:

Երկրաբանահետախուզական և հիդրոերկրաբանական պայմանների ուսումնասիրման նպատակով նախատեսվում են համապատասխան դիտարկումներ հետախուզական փորվածքների և հորատանցքերի անցման ընթացքում:

Երկրաբանահետախուզական աշխատանքների անվտանգությունը ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել անվտանգության տեխնիկական հրահանգի բոլոր պահանջները:

Հաշվի առնելով ուսումնասիրվող տարածքի հարթ ռելիեֆը, հորատման աշխատանքների իրականացման համար նախատեսվում է հորատման հրապարակների շինարարություն: Ճանապարհների շինարարություն չի նախատեսվում:

Փորձնական հանույթից առաջացած հողաբուսաշերտը կազմում է 24խմ, իսկ հորատման հարթակներից առաջացած հողաբուսաշերտը կազմում է 18խմ, ընդամենը՝ 42խմ:

Համաձայն նախնական գնահատման հայտի տարածքում ՀՀ բույսերի և կենդանիների կարմիր գրքում գրանցված տեսակներ չեն հայտնաբերվել, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ գրանցված չեն, հատուկ պահպանվող տարածքների հետ համընկնում չկա:

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Նավթամթերքների պահեստավորում և պահում արտադրական հրապարակում հատուկ հատկացված տեղում (բացօթյա կամ ծածկի տակ պահեստ), որին տրվում է համապատասխան թեքություն, որն ապահովում է թափված նավթամթերքների հոսքը դեպի այն հավաքող բետոնապատված փոսը:
- Օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարրաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար:
- Հնամաշ դետալների ու մասերի հավաքում հատկացված առանձին տեղում և հանձնվում որպես մետաղական ջարդոն:
- Կենցաղային աղբի տեղափոխում մոտակա աղբահավաք կետեր:
- Արտաթորվող թունավոր նյութերի չեզոքացուցիչ սարքերի տեղադրում:



- Փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների (աշխատանքային հրապարակները, հանքախորշերը, լցակույտերը, մուտքային և դեպի լցակույտեր տանող ավտոճանապարհը և այլն) ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին:

- նախատեսվում է ցանկապատել/մեկուսացնել աշխատանքների կատարման տեղամասերը:

- Խախտված տարածքների ռեկուլտիվացիա՝ ինչպես նաև կենսաբանական ռեկուլտիվացիա:

- Ընդերքօգտագործման թափոնների կառավարում:

Քարածիժի անդեզիտաբազալտների երևակման տարածքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում <<ՇԱՆԹ-ՍԵՅՐԱՆ>> ՍՊ ընկերությունն իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ հունիս-սեպտեմբեր ամիսներին (շոգ և քիչ տեղումներով եղանակին)՝ օգտակար հանածոյի արդյունահանման ընթացքում յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ:

2. Լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքի վիճակի պարբերական մշտադիտարկումներ, տարին մեկ անգամ հաճախականությամբ, որն իրականացվելու է վիզուալ մեթոդով:

3. Հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ վեց ամիսը մեկ անգամ հաճախականությամբ:

Ջրային ավազանի աղտոտում տեղի չի ունենա, քանի որ տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է հորատման հրապարակների ռեկուլտիվացիա և լանդշաֆտի վերականգնում՝ շինարարության ժամանակ հանված և կուտակված հողաբուսաշերտով /միջինը 0,2մ հզորությամբ/: Ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման համար նախատեսված է 100հազ. դրամ:

Քարածիժի անդեզիտաբազալտի երևակումում կատարվելիք երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ժամանակ թափոնների օբյեկտի ստեղծում չի նախատեսվում: Իսկ կենցաղային աղբը կտեղափոխվեն մոտակա աղբահավաք վայր:

## ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ

Երկրաբանահետախուզական աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր ազդեցությունը շրջակա միջավայրի բոլոր բաղադրիչների վրա թույլատրելի նորմայի սահմաններում է:

Օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են << բնապահպանության նախարարության ստորաբաժանումները:



Փորձաքննական գործընթացում նախագիծը վերադարձվել է լրամշակման և լրակազմման որի ընթացքում հաշվի է առնվել արված դիտողություններն ու առաջարկությունները:

### Փորձաքննական պահանջներ

1. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում պարբերաբար իրականացնել հողի, ջրի, օդի վերահսկման աշխատանքներ, և արդյունքները ներառել մոնիթորինգի պլաններում:

2. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում, անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր կարգով պահպանելով բնապահպանական, բոլոր նորմերը:

3. Ուսումնասիրության ընթացքում առաջացած շինարքի (կենցաղային արքի), հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

### ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

<<Շանթ-Սեյրան>> ՍՊԸ կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի Քարածիի անդեզիտաբազալի երևակումում 2018-2020թթ. կատարվելիք երկրաբանահետախուզական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ

Մասնագետ՝



Ա. Դոնոյան

Հ. Մեսրոպյան